ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության ու Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ծրագիր» Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամ +Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1031-26.03.2025-ՖՎ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության ու Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ծրագիր» Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագիծը մասնագիտական փորձաքննության են ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագծերի փաթեթը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծով սահմանված կարգավորումները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց նորմեր չեն պարունակում:

Հարկ ենք համարում նշել, որ Արդարադատության նախարարության՝ «Հայաստանի Հանրապետության ու Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ծրագիր» Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամ +Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմերի, ինչպես նաև Համաձայնագիրը վավերացման ենթակա դարձնող հիմքերի առկայության վերաբերյալ» եզրակացության համաձայն՝ «Համաձայնագիրը, թեև չի պարունակում օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմեր, սակայն պարունակում է օրենքին հակասող դրույթ»:

Մասնավորապես նշված է, որ Համաձայնագրի 8-րդ հոդվածի 8.4 մասի «բ» կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ վարկառուն խորհրդակցում է Բանկի, Հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակության հետ սույն Ֆինանսական պայմանագրի ստորագրման մասին հաղորդելու վերաբերյալ: Ուստի դրույթը խնդրահարույց է «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի տեսանկյունից, համաձայն որի՝ Միջազգային պայմանագրերը ենթակա են հրապարակման օրենքով սահմանված կարգով՝ վավերացման մասին օրենքի կամ հաստատման մասին Հանրապետության նախագահի հրամանագրի հետ միաժամանակ:

Մինչդեռ նշենք, որ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը վերաբերում է արդեն վավերացված միջազգային պայամանգրերի պաշտոնական հրապարակմանը՝ նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում հրապարակելու միջոցով: Իսկ համապատասխան միջազգային պայմանագրի 8-րդ հոդվածի 8.4 մասի «բ» կետի 3-րդ ենթակետը վերաբերում է նախքան վավերացումը Վարկառուի կողմից Բանկի, ՀՀ ԵՄ պատվիրակության հետ համապատասխան պայմանագիրը ստորագրելու մասին խորհրդակցելուն և չի առնչվում, ուստիև չի հակասում միջազգային պայմանագրի հրապարակման ընթացակարգին:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով սահմանված կարգավորումներում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)
09.04.2025թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Նախագծով առաջարկվում է վավերացնել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Հայաստան. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ծրագիր» Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագիրը, որը ստորագրվել է 2024թ. նոյեմբերի 12-ին՝ 236 մլն եվրո գումարի չափով: Նախատեսված միջոցներն ուղղվելու են ՀՀ Սյունիքի մարզում Սիսիանի և Քաջարանի միջև նոր 60 կմ երկարությամբ մեկ երթևեկելի մասի ճանապարհային հանգույցի կառուցման ընդհանուր ծրագրի մի մասի ֆինանսավորմանը:

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ

կատարող՝ գլխավոր մասնագետ Գ. Կիրակոսյան
(հեռ.՝ 011 513-603)
03.04.2025թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

Նախագծով առաջարկվում է վավերացնել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2024 թվականի նոյեմբերի 12-ին ստորագրված «Հայաստան. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ծրագիր» Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամ + Հատուկ ներդրումային պատուհան 1» ֆինանսական պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ Հյուսիս-հարավ մայրուղու առանցքային մաս կազմող՝ Սյունիքի հարավային և լեռնային շրջանում Սիսիանի և Քաջարանի միջև նոր ուղեգծի կառուցման ծրագրին (այսուհետ՝ Ծրագիր)՝ օժանդակելու նպատակով:

Պայմանագրի համաձայն՝ Եվրոպական ներդրումային բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է 236.000.000 եվրոյի չափով (երկու հարյուր երեսունվեց միլիոն եվրո) վարկ՝ Ծրագրի ֆինանսավորման համար:

Ծրագիրը կազմված է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում Սիսիանի և Քաջարանի միջև նոր 60 կմ երկարությամբ մեկ երթևեկելի մասի ճանապարհային հանգույցի կառուցումից:

Ճանապարհահատվածի կառուցումը կնպաստի տրանսպորտային ծախսերի կրճատմանը, տարանցիկ տրանսպորտի ներգրավմանը, ապրանքաշրջանառության մեծացմանը և տուրիզմի զարգացմանը:

Նախագիծը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ,
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Լ. Սարգսյան (հեռ.՝ 011 513-270, 12-70)

04.04.2025 թ.